# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N6

## ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-18/6 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի

Ք. Սևան | 07.04.2018թ. ժամը 16:30

**Հանձնաժողովի նախագահ՝** Մարի Սիմոնյան

**Անդամներ՝** Խաչիկ Կիրակոսյան

Վարդուհի Վարդանյան

Ռոմելա Հարությունյան

Մարիանա Առաքելյան

**Գնումները համակարգող՝** Լանա Դավթյան

**<u>ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-18/6 ծածկագրով հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին</u>**

(Մ. Սիմոնյան)

1. ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-18/6 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը կասեցնելու և անհամապատասխանությունները շտկելու մասին.
2. ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տրամադրած տեղեկատվությունը գնահատելու մասին.
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

**<u>1. ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-18/6 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը կասեցնելու և անհամապատասխանությունները շտկելու մասին.</u>**

(Մ. Սիմոնյան)

1.1 Նկատի ունենալով, որ <<**Ցիկլոիդ**>> **ՍՊԸ-ի** կողմից ներկայացված առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից իրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման դիմումը /հավելված 6/ և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը /հավելված 6.1/, <<**Մակրո Ֆուդ**>> **ՍՊԸ-ի և** <<**Գարդմեն**>> **ՍՊԸ-ի** կողմից ներկայացված առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը /հավելված 6.1/

չէր համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 47-րդ կետով, սույն ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.04.2017թ.-ի թիվ 5 որոշմամբ մեկ աշխատանքային օրով կասեցվել էր նիստը, որի մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացվել էր **<<Ցիկլոիդ>> ՍՊԸ-ին, <<Գարդմեն>> ՍՊԸ-ին և <<Մակրո Ֆուդ>> ՍՊԸ-ին՝** առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

1.2 **<<Ցիկլոիդ>> ՍՊԸ-ն, <<Գարդմեն>> ՍՊԸ-ն և <<Մակրո Ֆուդ>> ՍՊԸ-ն** հրավերով սահմանված ժամկետում և կարգով շտկել են անհամապատասխանությունները:

1.3 **<<Ցիկլոիդ>> ՍՊԸ-ի, <<Գարդմեն>> ՍՊԸ-ի և <<Մակրո Ֆուդ>> ՍՊԸ-ի** կողմից ներկայացված առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման դիմումը /հավելված 6/ և առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը /Հավելված 6.1/ համապատասխանում են սույն հրավերի պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

**2. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տրամադրած տեղեկատվությունը գնահատելու մասին.**

(Մ. Սիմոնյան)

2.1 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 06.04.2018թ.-ի եզրակացության համաձայն **<<Արմեն-Համիկ եղբայրներ>> ՀՁ ՍՊԸ-ն, <<Դեագա>> ՍՊԸ-ն, <<Մակրո Ֆուդ>> ՍՊԸ-ն, <<Գարդմեն>> ՍՊԸ, Վիկտորյա Սամվելյան Ա/Ձ-ն, Շուշանիկ Ավագյան Ա/Ձ-ն, <<Պիրամիդա Կվինտ>> ՍՊԸ-ն և <<Ցիկլոիդ>> ՍՊԸ-ն** հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունեն:

2.2 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 06.04.2018թ.-ի եզրակացության համաձայն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով **<<Կառոլ>> ՍՊԸ-ն** ունի 1779 դրամ ժամկետանց պարտավորություն, որը չի գերազանցում <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը:

2.3 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 06.04.2018թ.-ի եզրակացության համաձայն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով **<<Եվա և Սյուզի>> ՍՊԸ-ն** ունի 114010 դրամ ժամկետանց պարտավորություն, որը գերազանցում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը: Ելնելով վերգրյալից և ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 44-րդ կետով <<Եվա և Սյուզի>> ՍՊԸ-ի հայտը **մերժել**:

Նկատի ունենալով, որ 8-րդ, 16-րդ և 33-րդ չափաբաժիններով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչված <<Եվա և Սյուզի>> ՍՊԸ-ի հայտը մերժվել է, հանձնաժողովը որոշեց նշված չափաբաժիններով առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման դիմումը /հավելված 6/ և առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը /Հավելված 6.1/ ներկայացնելու պահանջ ներկայացնել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցներին՝

<<**Մակրո Ֆուդ**>> **ՍՊԸ-ին** 8-րդ չափաբաժնով
<<**Կառոլ**>> **ՍՊԸ-ին** 16-րդ չափաբաժնով
<<**Գարդմեն**>> **ՍՊԸ-ին** 33-րդ չափաբաժնով
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2.4 <<**Մակրո Ֆուդ**>> **ՍՊԸ-ին,** <<**Կառոլ**>> **ՍՊԸ-ին և** <<**Գարդմեն**>> **ՍՊԸ-ին** ուղարկել ծանուցում առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-18/6 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտով առաջադրված ապրանքների ամբողջական նկարագիրը:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

### <u>3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.</u>

(Մ. Սիմոնյան)

3.1 ՀՀ ԱՆ <<Սևանի հոգեբուժական հիվանդանոց>> ՓԲԸ-ի ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-18/6 ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 13.04.2018թ.-ին ժամը 12:30, ք. Սևան Կարմիր Բանակի 68 հասցեում, ֆինանսական բաժնի վարչական շենքում:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Սիմոնյան

Անդամներ՝ Խ. Կիրակոսյան
Վ. Վարդանյան
Ռ. Հարությունյան
Մ. Առաքելյան

Գնումների համակարգող՝ Լ. Դավթյան